ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.12.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2021/321

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե

Մասնակից՝ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ

Մասնակցությամբ՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչներ՝ Ռ. Գրիգորյանի, Հ. Մանուկյանի, Գ. Ղազարյանի,

«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի տնօրեն Մ. Մուրադյանի, ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Հովնանյանի, Մ. Ասմանգուլյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1» գնանշման հարցման ընթացակարգ, ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես- բեռների համար ուղևորային մաքսային

հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.11.2021թ.-ի թիվ 26/26-1/18828-2021 գրությամբ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 11.11.2021թ.-ի թիվ 1/18-2/72033-2021 գրության հիման վրա, 18.11.2021թ.-ին «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 18.11.2021թ.-ին:

18.11.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/321 համարի ծածկագիրը:

24.11.2021թ.-ին, 08.12.2021թ.-ին, 16.12.2021թ.-ին և 20.12.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.12.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 20.12.2021թ.-ին:

2. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 11.11.2021թ.-ի թիվ 1/18-2/72033-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ 2021 թվականի փետրվարի 24-ին (համաձայնագրի կնքման ամսաթիվը՝ 16.04.2021թ.) ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Կատարող) միջև կնքվել է ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), սակայն Կատարողի կողմից խախտվել է ծառայությունների մատուցման ժամանակահատվածը և մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով չհամապատասխանող ծառայություն, չի ապահովվել Պայմանագրի 2.4.1 կետով սահմանված պարտավորությունը և կատարման ընթացքի վերաբերյալ մասնագիտական խմբի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի ա) և բ) ենթակետերը՝ Պատվիրատուն ստիպված է եղել պայմանագրով նախատեսված պայմանները չկատարելու համար 2021 թվականի նոյեմբերի 10-ին միակողմանի լուծել 2021 թվականի փետրվարի 24-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով գնման պայմանագիրը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 18.11.2021թ.-ին գրությամբ դիմել է «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.11.2021թ.-ի թիվ 26/26-1/18828-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 06.12.2021թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/321 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող եվ օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի արդյունքում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի միջև 24.02.2021թ. կնքվել է ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով պայմանագիր:

ՊԵԿ-ի 10.11.2021թ. թիվ 1/18-2/71709-202/ գրության (կցվում է) համաձայն.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ 2021 թվականի փետրվարի 24-ին /համաձայնագրի կնքման ամսաթիվ՝ 16.04.2021թ./ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հարմոնիա»

տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի միջև 24.02.2021թ. կնքվել է ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող եվ օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանգիր /այսուհետ նաև՝ Պայմանագիր/, սակայն Կատարողի կողմից խախտվել է Պայմանգրի N 1 սահմանված պայմաններով չհամապատասխանող ծառայություն, չի ապահովվել Պայմանգրի 2.4.1 կետով սահմանված պարտավորությունը և կատարման ընթացքի վերաբերյալ մասնագիտական խմբի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Հիմք ընդունելով Պայմանգրի 2.1.3 կետի ա) և բ) ենթակետերը՝ Պատվիրատուն ստիպված է պայմանագրով նախատեսված պայմանները չկատարելու համար միակողմանի լուծել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի միջև 24.02.2021թ. կնքված ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով պայմանագիրը և Պայմանագրի մասով գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված 9 000 000 ՀՀ դրամի որակավորման և 6 000 000 ՀՀ դրամի պայմանագրի ապահովման գումարները: ՀՀ ՊԵԿ-ը նաև նախաձեռնում է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնաև՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Գտնում ենք, որ ՀՀ ՊԵԿ-ը միակողմանի լուծելով ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող եվ օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված «ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագիրը, գործել է ոչ իրավաչափ՝ անտեսելով հետևյալ կարևորագույն հանգամանքները.

«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը 25.10.2021թ. պատշաճ կատարել է Պայմանգրով նախատեսված պարտավորությունները, ինչը հավաստվում է Armeps համակարգ ներբեռնած 25.10.2021թ. թիվ U583850108 հաշիվ ապրանքագրով (կցվում է), նաև պատվիրատուին է տրամադրվել հանձնման-ընդունման ակտը՝ վերջինիս կողմից այն ստորագրելու համար:

Որից հետո, 01.11.2021թ. կազմվել է Պայմանգրի կատարման վերաբերյալ եզրակացություն (կցվում է), որի համաձայն.

«Սույն թվականի հոկտեմբերի 25-ին Կատարողի կողմից ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչությանը տրամադրվել է Համակարգի 1.0.0-rc3 տարբերակը, որը տեղայնացվել է ՀՀ ՊԵԿ թեստային

միջավայրում: ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչության աշխատակիները հոկտեմբերի 27-30-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել են Համակարգի թեստավորում և վերհանել են մի շարք խնդիրներ: Վերահանված խնդիրները կցվում են սույն եզրակացությանը: Վերհանված բոլոր խնդիրները համախումբը վկայում է այն մասին, որ տրամադրված Համակարգի 1.0.0-rc3 տարբերակը չի համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին, մասնավորապես ՝ 1.2 կետի 2-րդ պարբերության և 3-րդ պարբերության առաջին և երկրորդ ենթակետերով սահմանված պահանջներին, այն է՝.

«-Համակարգը հնարավորություն կտա տեղափոխվող բոլոր էքսպրես բեռների նկատմամբ իրականացնել ամբողջականբ հաշվառում, համապատասխան մաքսային ընթացակարգերով հայտարարգրում, մաքսային հսկողության իրականացում, հաշվետվությունների ավտոմատացում և վերլուծությունների կատարում:

Համակարգի միջոցով է պետք իրականացվի հետևյալ հիմնական գործառույթները.

- *Փոխադրողի կողմից որպես էքսպրես-բեռ տեխափոխվող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների հայտարարագրում՝ ԵՏՄ օրենսդրությամբ սահմանված՝ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ.*
- *Փոխադրողի կողմից որպես էքսպրես-բեռ տեխափոխվող ԵՏՄ օրենսդրությամբ սահմանված մաքսային ընթացակարգերով հայտարարագրման ենթակա ապրանքների հայտարարագրում ԵՏՄ օրենսդրությամբ սահմանված՝ էքսպրես-բեռների համարապրանքային հայտարարագրի կիրառությամբ..... :»*

Տրամադրված Համակարգի 1.0.0-rc3 տարբերակը չի համապատասխանում նաև տեխնիկական բնութագրի հետևյալ պահանջին.

«Պահանջ 48 / Կապալառու ընկերության տրամադրած ծրագրային ապահովումները և մատուցված ծառայությունները պետք է զերծ լինեն նախագծման, ծրագրային և այլ փերություններից, որոնք կարող են հանգեցնել համակարգի և/կամ վերջինիս բաղկացուցիչ մասերի ոչ պատշաճ աշխատանքին, նախանշված պահանջների չկատարմանը, կատարողականության, հուսալիության, ընդլայնման, արտադրողականության խափանմանը:»

Միևնույն ժամանակ mulberry էլկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի թիվ 55055-2021 առ 25 կոտկեմբերի 2021թ. «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի գրությամբ ներկայացված տեխնիկական առաջադրանքում նկարագրված է միայն որպես էքսպրես-բեռների համար

ապրանքային հայտարարագրին վերաբերող տեղեկատվությունը, և բացակայում է որպես էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրին վերաբերող տեղեկատվությունը, իսկ «Օգտվողի ձեռնարկում» ամբողջական չեն ներկայացված գործողությունների նկարագրությունները:

Հաշվի առնելով վերոհիշյալ խնդիրները և տեխնիկական բնութագրով սահմանված պահանջների չկատարման հանգամանքը՝ եզրակացնում ենք, որ Կատարողի կողմից հաձնարարված և Պատվիրատուի սերվերային թեստային միջավայրում տեղադրված տարբերակը չի կարող տեղայնացվել Պատվիրատուի սերվերային արտադրական իրական /live/ միջավայրում, և էքսպրես-բեռների հայտարարգրման համար հնարավոր չէ կիրառել ոչ էքսպրես-բեռների ապրանքային հայտարարգիր, ոչ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարգիր:»

Ընկերությունը ՊԵԿ-ին ուղղված 02.11.2021թ. գրությամբ (կցվում է) տեղեկացրել է հետևյալը.

««Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի կողմից N ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով (ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման) պայմանագրի արդյունքները ս. թ. հոկտեմբերի 25-ին Պատվիրատուին ներկայացնելուց հետո, Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից նկատվել և ս. թ. հոկտեմբերի 27-ին մեզ է ներկայացվել ուղղման ընդամենը մեկ աննշան սխալ (bug), որը ուղղվել է մեր կողմից ս.թ. հոկտեմբերի 29-ին և ծրագրային ապահովման նոր տարբերակը ներկայացվել է Պատվիրատուին: Մեր կողմից ևս կատարվել են ծրագրային ապահովման որոշակի բարելավումներ, որոնք հասանելի են դարձվել Պատվիրատուին ս. թ. նոյեմբերի 01-ին:

Մինչ այժմ մեր կողմից թարմացված ծրագրային ապահովման տարբերակները պատասխանատու ստորաբաժանման կողմից չեն տեղադրվել Պատվիրատուի թեստային միջավայրում և չեն դիտարկվել, նաև մեզ չի տրամադրվել որևէ տեղեկություն առկա որևէ այլ թերությունների և/կամ ուղղման ենթակա սխալների մասին: Խնդրում եմ վերջնական թեստավորման համար դիտարկել մեր կողմից ներկայացված վերջին տարբերակը:

Անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ ծրագրային ապահովման համակարգը ապահովում է պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված բոլոր գործառույթների իրականացումը, իսկ ընթացքում ի հայտ եկող ոչ կրիտիկական վրիպակները/սխալները և/կամ բարելավման կարիքները բնականոն են զրոյից մշակված բարդ համակարգերի համար և ենթակա են ուղղման երաշխիքային սպասարկման ժամանակահատվածում: »

Ընկերությունը 05.11.2021թ. ի պատասխան N ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի արդյունքների վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից Armeps համակարգում զետեղված բացասական եզրակացության, համապատասխան գրությամբ (կցվում է) նշել հետևյալը.

«1. Պատասխանատու ստորաբաժանման կողմից համակարգի թեստավորման ընթացքում (հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 01-ը) «Հարմոնիա» հիմնադրամին ուղղման է ներկայացվել ընդամենը մեկ չնչին սխալ, որը ուղղվել է մեր կողմից և նոր տարբերակը ներկայացվել է ՊԵԿ: Նույն ժամանակահատվածում մեր կողմից կատարվել են համակարգի բարելավումներ և չնչին սխալների ուղղումներ, որոնք նոր թողարկման տեսքով հասանելի են դարձվել ՊԵԿ-ի պատասխանատու ստորաբաժանմանը՝ գրավոր առաջարկությամբ թեստավորման նպատակով դիտարկել ծրագրի 01.11.2021թ. թողարկված տարբերակը: Այնուամենայնիվ, ՊԵԿ-ի պատասխանատու ստորաբաժանումը դիտարկել է առաջին թողարկված տարբերակը և բացասական եզրակացությանը կից փաստաթղթում նշել է մի շարք թերություններ, որոնք արդեն իսկ ուղղված և ներկայացված են եղել ՊԵԿ հաջորդ թողարկմամբ:

2. Մեր կողմից իրականացվել է բացասական եզրակացությանը կից փաստաթղթում արձանագրված թերությունների/սխալների վերլուծություն, որի արդյունքում հայտնում ենք հետևյալը.

Աշխատանքային խմբի եզրակացությանը կից փաստաթղթում արձանագրված 44 թերություններից.

- *23-ը ուղղված են եղել ՊԵԿ-ին ներկայացված 01.11.2021թ. տարբերակում*
- *5-ը կարելի է դիտարկել որպես բարելավման առաջարկ, այլ ոչ թե սխալ*
- *3-ը ոչ թե այս համակարգի խնդիր է, այլ Մաքսային միասնական համակարգի (ՄՄԱՏՀ) բարելավման կարիք*
- *3-ը տեխնիկական առաջադրանքից դուրս նոր առաջադրանք*
- *1-ը խնդիր չէ, այլ ՄՄԱՏՀ համակարգի աշխատանքի առանձնահատկություն*

- *1-ը խնդրի բովանդակությունը հասկալալի չէ, այն ենթակա է քննարկման*
- *6-ը լուծման ենթակա չնչին սխալ*
- *2-ը՝ կրկնվող արդեն նշված 6 ուղղման ենթակա սխալներում ներառված:*

Յուրաքանչյուր արձանագրված խնդրի վերաբերյալ մեր արձագանքը ներկայացնում ենք կից փաստաթղթով:

Այսպիսով, այս պահին առկա է ընդամենը 6 ուղղման ենթակա չնչին սխալ, որոնք բարելավման առաջարկությունների հետ մեկտեղ կշտկվեն համակարգի նոր թողարկմամբ առաջիկա 4 աշխատանքային օրերի ընթացքում և կտրամադրվեն ՊԵԿ-ին:

Ցանկանում ենք շեշտել, որ համակարգը ապահովում է պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված գործառույթների և գործընթացների ամբողջ կենսացիկլը և պատրաստ է ներդրման արտադրական միջավայրում՝ մի քանի օրերի ընթացքում: Համաձայն պայմանագրի դրանից հետո հայտնաբերվող թերությունները և/կամ բարելավումները ենթակա են շտկման երաշխիքային սպասարկման ժամանակահատվածում:

Բնականոն է բարդ ավտոմատացված համակարգերի ներդրման և շահագործման ընթացքում թերությունների, բարելավումների առաջ գալը և դրանց շտկումը համաձայնեցված կարգով: Օրինակ՝ մեր կողմից սպասարկվող ՄՄԱՏՀ համակարգում ամսական կտրվածքով բացվում է միջինը 15 շտկման/բարելավման հայտ, որոնք իրագործվում են սպասարկման ընթացքում և չեն խոչընդոտում համակարգի անխափան աշխատանքին:

Հաշվի առնելով, որ արձանագրված ուղղման ենթակա սխալների համար անհրաժեշտ է ընդամենը մի քանի օր, խնդրում ենք մեզ տրամադրել այդ կարճ ժամանակահատվածը թերությունները շտկելու համար, որից հետո համակարգը կարող է տեղափոխվել արտադրական միջավայր և անցնել երաշխիքային սպասարկման ռեժիմ:»

Պատվիրատուն 10.11.2021թ. գրությամբ (կցվում է) հայտնել է հետևյալը.

«Ի Պատասխան Ձեր 02.11.2021թ. և 05.11.2021թ. գրությունների տեեկացնում եմ, որ «Հարմոնիա» հիմնադրամի 06.11.2021թ. գրությամբ ՀՀ ՊԵԿ և «Հարմոնիա» հիմնադրամի միջև կնքված Պայմանգրով ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի

ներդրման խորհրդատվական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանգրի շրջանակներում Ընկերության կողմից խնդրարկվել էր հավելյալ ժամանակահատված մինչև սույն թվականի կոկտեմբերի 25-ը ներառյալ ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի արդյունքներ ամբողջական ամփոփման և ՀՀ ՊԵԿ ներկայացնելու համար:

Սույն թվականի հոկտեմբերի 25-ին Կատարողի կողմից ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչությանը տրամադրվել է Համակարգի 1.0.0-rc3 տարբերակը, որի ուսումնսիրության արդյունքում վերահանվել են մի շարք խնդիրներ, որի արդյունքում ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես- բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների գնման գործընթացն իրականցնելու համար մասնակիտական խումբ ձևավորելու մասին» ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղարի 2021թ. հունվարի 18-ի թիվ 8/1-Ա և հունվարի 26-ի թիվ 29/1-Ա և մարտի 15-թիվ103/1 –Ա հրամանների համաձայն ձևավորված մասնագիտական խումբը պայմանգրի կատարման ընէացքի վերաբերյալ տվել է բացասական եզրակացություն և Պայմանգրի 3.3 կետի համաձայն՝ armeps համակարգի միջոցով ընդունման-հանձման, արձանագրությունը չի ստորագրվել:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագրի Տեխնիկական բնութագրի Պահանջ 4-ի համաձայն՝ «Ծրագրային ապահովումները պետք է նախքան տեղադրումը փորձարկվի Կապալառուի թեսթային միջավայրում կապալառուի կողմից, որից հետո տեղայնացվի Պատվիրատուի թեսթային միջավայրում», որը ենթադրում է, որ ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչությանը տրամադրված ծրագրային ապահովման 1.0.0-rc3 տարբերակը պետք է զերծ լիներ թերություններից, անճշտություններից, կրիտիկական և արգելափակող խնդիրներից, ծրագրային և այլ թերություններից, Կատարողը պետք է բավարարեր Պահանջ 48-ի դրույթները:

Տեղեկացնում եմ նաև, որ սույն թվականի 12-25-ն ընկած ժամանակահատվածի ընթացքում Պատվիրատուի կողմից Կատարողի թեստային միջավայրում իրականացվել է Համակարգի ուսումնասիրություն, որակի ստուգում և թեստավորման արդյունքում ի հայտ եկած թերությունները, անճշտությունները, արգելափակող և այլ խնդիրները Կատարողին

ներկայցվել են իրական ժամանակում աշխատանքային կարգով, սակայն ծրագրային ապահովման 1.0.0-rc3 տարբերակում դրանց մի մասը դեռ կարգավորված չէին:

Տեղեկացնում եմ նաև, որ Պատվիրատուի և Կատարողի միջև ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ աշխատող համակարգը Պատվիրատուին պետք է տրամադրվեր մինչև 2021թ. հոկտեմբերի 25-ը ներառյալ /ինչն արդեն իսկ բավականին ուշ էՊայմանագրով ի սկզբանե սահմանված նժամկետից, որը սեպտեմբերի 13-ն էր /, և Պատվիրատուի կողմից համակարգի ընդունման վերաբերյալ որոշման կայացման նպատակով դիտարկվել է հենց հոկտեմբերի 25-ին ներկայացված 1.0.0-rc3 տարբերակը:

Համկարգի բազմաթիվ տարբերակներ կարող էին դիտարկվել, և համատեղ աշխատանք կարող էր տարվել մինչև սահմանված ժամկետը և ոչ դրանից հետո, այլապես այդ գործընթացը կարող է լինել անվերջ, և ժամկետների սահմանումն այդ պարագայում դառնում է անիմաստ:

Այնուամենայնիվ, տեղեկացնում եմ Ձեզ, որ 02.11.2021թ. և 08.11.2021թ. գրություններով Կատարողի կողմից ներկայացված սույն թվականի նոյեմբերի 01-ի՝ ծրագրային ապահովման տարբերակի /1.0.0-rc3 տարբերակը/ ուսումնասիրության արդյունքում վերհանվել են մի շարք խնդիրներ, որոնց համախումբը վկայում է այն մասին, որ Պատվիրատուի սերվերային թեստային միջավայրում տեղադրված տարբերակը /1.0.0-rc3 տարբերակը/ ևս չի կարող տեղայնացվել Պատվիրատուի սերվերային արտադրական իրական /live/ միջավայրում, և էքսպրես-բեռների հայտարարագրման համար հնարավոր չէ ամբողջությամբ կիրառել ոչ էքսպրես-բեռների ապրանքային հայտարարագիր, ոչ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագիր:

Միևնույն ժամանակ տեղեկացնում եմ, որ սույն թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 55055-2021 գրությամբ Ընկերության կողմից տեղեկացվել է, որ Կատարողը Պատվիրատուին է տրամադրել «նաև Կատարողի և Պատվիրատուի միջև հոկտեմբերի 7-ից հոկտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած բոլոր հանդիպումների արձանագրությունները:»

Ընկերությունը 10.11.2021թ. ՀՀ ՊԵԿ-ին ուղղված գրությամբ (կցվում է) հայտնել է հետևյալը.

««Հարմոնիա» հիմնադրամի կողմից Պետական եկամուտների կոմիտեին ներկայացված ծրագրային ապահովման համակարգը զերծ է բլոկավորող, արգելափակող և կարևոր սխալներից, որոնք կարող են հանգեցնել Համակարգի աշխատանքի խափանմանը, անվտանգային խնդիրներին կամ բիզնես տրամաբանության սխալ աշխատանքին, մինչդեռ

չնչին և ոչ կրիտիկական սխալները ենթակա են շուտափույթ ուղղման՝ Պատվիրատուից դրանց մասին ծանուցում ստանալու պահից համաձայնեցված ողջամիտ ժամկետներում, ինչպես որ դա արվում է նմանատիպ SS համակարգերի ներդրման և սպասարկման պայմանագրերի շրջանակներում, որոնց փորձն ունի ՊԵԿ-ի պատասխանատու ստորաբաժանումը:

Բազմաթիվ ավտոմատացված համակարգերի մշակման, ներդրման և սպասարկման ոլորտում մասնագիտացված Ձեր աշխատանքային խումբը կհաստատի, որ որևէ մշակված ավտոմատացված տեղեկատվական համակարգ ներդրման պահին չի կարող զերծ լինել չնչին և ոչ կրիտիկական սխալներից և/կամ բարելավման առաջարկներից: Այդ նպատակով համակարգերի մշակման և ներդրման գործընթացին հաջորդում է երաշխիքային սպասարկման ժամանակաշրջան, որից հետո՝ համակարգի սպասարկում մասնագիտացված ընկերության կողմից՝ հաշվի առնելով առկա փորձը:

Որպես օրինակ կարող ենք բերել մեր կողմից սպասարկվող Մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգը (ՄՄԱՏՀ): ՄՄԱՏՀ-ն ընդունվել է և տեղադրվել է արտադրական միջավայրում 2018թ., սակայն ՄՄԱՏՀ-ում մինչ այժմ հայտնաբերվում են սխալներ և թերություններ, որոնց մասով ամսվա կտրվածքով բացվում/լուծվում է միջինը 15 թերթիկ, սակայն դրանց ուղղման գործընթացում ՄՄԱՏՀ-ն շարունակվում է շահագործվել արտադրական միջավայրում և սպասարկել պետության կարիքները:

Ապահովելով ավտոմատացված գործընթացների ճշգրիտ կենսացիկլը և չունենալով բլոկավորող, արեգլափակող սխալներ՝ համոզված ենք, որ մեր կողմից մշակված համակարգը կարող է տեղափոխվել արտադրական (live) միջավայր:

Խնդրում ենք տրամադրել ՊԵԿ-ի պատասխանատու ստորաբաժանման կողմից ծրագրի 1.0.0.-rc5 տարբերակում հայտնաբերված յուրաքանչյուր սխալի վերաբերյալ տեղեկատվություն, քանի որ մեզ դրանց մասին ոչինչ հայտնի չէ: Շատ հաճախ որպես «սխալ» որակվող խնդիրները ընդամենը ոչ ճշգրիտ արված կարգավորման կամ կարգաբերման արդյունք են և ենթակա են լուծման հայտնաբերման նույն պահին, կամ խոսքը գնում է ոչ թե սխալի, այլ ՄՄԱՏՀ ընդհանուր աշխատանքի առանձնահատկության, կամ բարելավման առաջարկի մասին: ՊԵԿ-ի բացասական եզրակացությանը կցված փաստաթղթում արձանագրված սխալներից դեռևս 01.11.2021թ. դրությամբ ուղղման ենթակա է եղել ընդամենը 6 չնչին սխալ, որոնց գերակշռող մասն արդեն իսկ ուղղված է ծրագրի 1.0.0-

rc6 տարբերակում, մինչդեռ մեզ հայտնի մյուս բոլոր չնչին սխալները և բարելավման առաջարկները կատարված կլինեն երկու օրերի ընթացքում:

Վստահ ենք, որ ծախսարդյունավետության տեսակետից նպատակահարմար է հայտնաբերվող սխալների և/կամ առաջարկությունների մասին հայտնել Կատարողին, որը 24/7 աշխատանքային ռեժիմում պատրաստ է շտկել թերությունները և բարելավել համակարգը, մինչդեռ Պատվիրատուն կունենա պետության կարիքները սպասարկող համակարգ արդեն այժմ, որի բարելավումը որպես շարունակական գործընթաց կիրականացվի երաշխիքային սպասարկման ժամանակահատվածում:

Հակառակ դեպքում՝ պայմանագիրը միակողմանի լուծելու դեպքում, ՊԵԿ-ը չի ունենա պետության կարիքների համար մեծ կարևորություն ունեցող «էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» համակարգ, կամ կունենա բազմաթիվ ամիսներ հետո:

Կից ներկայացնում ենք մեր 05.11.2021թ. գրության պատճեն ուղղված «ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի շրջանակներում ստեղծված աշխատանքային խմբին՝ բացասական եզրակացությանը կից փաստաթղթում արձանագրված յուրաքանչյուր սխալի վերաբերյալ մեր մեկնաբանություններով, որով հաստատվում է, որ համակարգում 01.11.2011թ. դրությամբ չկա որևէ բլոկավորող, արգելափակող կամ կարևոր սխալ և ուղղման ենթակա է ընդամենը 6 չնչին սխալ:

Խնդրում ենք կազմակերպել մասնագիտացված խմբերի հանդիպում՝ ՊԵԿ ղեկավարության մասնակցությամբ, պատասխանատու ստորաբաժանման կողմից վկայակոչվող, սակայն մեզ անհայտ սխալների գոյության, ուսումնասիրության և պարզաբանման համար:»

Սակայն արդյունքում, 10.11.2021թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեն միակողմանի լուծել է Պայմանգիրը, նշելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ 2021 թվականի փետրվարի 24-ին /համաձայնագրի կնքման ամսաթիվ՝ 16.04.2021թ./ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի միջև 24.02.2021թ. կնքվել է ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող եվ օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային

հայտարարագրի կամ էքսպրես- բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանգիր /այսուհետ նաև՝ Պայմանագիր/, սակայն Կատարողի կողմից խախտվել էՊայմանգրի N 1 սահմանված պայմաններով չհամապատասխանող ծառայություն, չի ապահովվել Պայմանգրի 2.4.1 կետով սահմանված պարտավորությունը և կատարման ընթացքի վերաբերյալ մասնագիտական խմբի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Հիմք ընդունելով Պայմանգրի 2.1.3 կետի ա) և բ) ենթակետերը՝ Պատվիրատուն ստիպված է պայմանագրով նախատեսված պայմանները չկատարելու համար միակողմանի լուծել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի միջև 24.02.2021թ. կնքված ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով պայմանագիրը և Պայմանագրի մասով գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված 9 000 000 ՀՀ դրամի որակավորման և 6 000 000 ՀՀ դրամի պայմանագրի ապահովման գումարները: ՀՀ ՊԵԿ-ը նաև նախաձեռնում է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

Միևնույն ժամանակ Ձեզ եմ ներկայացնում Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու մասով հաշվարկված տուգանքի և տույժերի հաշվարկը.

Տուգանքի հաշվարկ՝ 60 000 000 X 0.5%=300 000 ՀՀ դրամ,

Տույժի հաշվարկ՝ 60 000 000 X 0.05%=30 000 ՀՀ դրամ,

41 աշխատանքային օր ուշացման համար՝ 30 000 X 41=1 230 000 ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք, որ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին փոխանցել 1 530 000 ՀՀ դրամ՝ Պայմանգրի 5.2 և 5.3 կետերի համաձայն որպես տուժանք և տույժ:»

Գտնում ենք, որ ՀՀ ՊԵԿ-ը միակողմանի լուծելով ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող եվ օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային

հայտարարագրի կամ էքսպրես- բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված «ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագիրը, գործել է ոչ իրավաչափ՝ անտեսելով հետևյալ կարևորագույն հանգամանքները.

«Հարմոնիա» հիմնադրամի կողմից Պետական եկամուտների կոմիտեին ներկայացված ծրագրային ապահովման համակարգը զերծ է բլոկավորող, արգելափակող և կարևոր սխալներից, մինչդեռ ՊԵԿ-ի կողմից հայտնաբերված աննշան և չնչին սխալների քանակը 6-ն է, որի դեպքում Պատվիրատուն, հիմք ընդունելով պայմանագրի տեխնիկական բնութագրի 52-րդ պահանջի դրույթները, չպետք է տար բացասական եզրակացություն, մասնավորապես.

Պահանջ 52՝ «Թեստավորման արդյունքում ներքոնշյալ դեպքերում համակարգը չի ընդունվելու Պատվիրատուի կողմից.

Արգելափակող (Blocker) որևէ սխալի առկայություն,Կրիտիկական (Critical) որևէ սխալի առկայություն,

Հիմնարար/կարևոր (Major) 2-ից ավել սխալի առյակության դեպքում,

Աննշան (Minor) 10-ից ավել սխալի առյակության դեպքում

Չնչին (Trivial) 30-ից ավել սխալի առյակության դեպքում:

«Հարմոնիա» հիմնադրամը ներկայացրել է Պատվիրատուին Համակարգի երկու տարբերակ՝ 1.0.0-rc3 տարբերակը 25.10.2021թ. և Համակարգի 1.0.0-rc5 տարբերակը՝ 01.11.2021թ.՝ գրավոր առաջարկով թեստավորման և եզրակացության նպատակով դիտարկել 01.11.2021թ. թողարկված ծրագրի 1.0.0-rc5 տարբերակը: ՊԵԿ-ի կողմից բացասական եզրակացությունը տրվել է Ծրագրային ապահովման 25.10.2021թ. թողարկված հին տարբերակի թեստավորման արդյունքների հիման վրա՝ անտեսելով «Հարմոնիա» հիմնադրամի գրավոր առաջարկը դիտարկել Ծրագրային ապահովման 01.11.2021թ. թողարկված նոր 1.0.0.-rc5 տարբերակը: Մեր կողմից իրականացվել է Ծրագրի 25.10.2021թ. տարբերակի վերաբերյալ բացասական եզրակացությանը կից փաստաթղթում արձանագրված թերությունների/սխալների վերլուծություն, որի արդյունքում հայտնել ենք ՊԵԿ-ին որ, ՊԵԿ-ի աշխատանքային խմբի եզրակացությանը կից փաստաթղթում արձանագրված 44 թերություններից.

- *23-ը ուղղված են եղել ՊԵԿ-ին ներկայացված 01.11.2021թ. տարբերակում*
- *5-ը՝ հանդիսանում է բարելավման առաջարկ, այլ ոչ թե սխալ*

- *3-ը՝ ոչ թե այս համակարգի խնդիր է, այլ Մաքսային միասնական ավտոմատացված համակարգի (ՄՄԱՏՀ) բարելավման կարիք*
- *3-ը՝ տեխնիկական առաջադրանքից դուրս նոր առաջադրանք*
- *1-ը՝ խնդիր չէ, այլ ՄՄԱՏՀ համակարգի աշխատանքի առանձնահատկություն*
- *1-ը՝ խնդրի բովանդակությունը հասկալալի չէ, այն ենթակա է քննարկման*
- *6-ը՝ լուծման ենթակա չնչին սխալ*
- *2-ը՝ կրկնվող արդեն նշված 6 ուղղման ենթակա սխալներում ներառված:*

Այսպիսով, ՊԵԿ-ի կողմից բացասական եզրակացության կայացման օրվա դրությամբ Համակարգում առկա է եղել ուղղման ենթակա 6 չնչին սխալ, նաև առկա է եղել «Հարմոնիա» հիմնադրամի գրավոր հավաստումը, որ հիմնադրամը կապահովի հայտնաբերված 6 չնչին սլախների, ինչպես նաև բոլոր բարելավման առաջարկությունների և նոր առաջադրանքները կատարումը բառացիորեն մի քանի օրերի ընթացքում: Այսպիսով, Պետական եկամուտների կոմիտեն փաստացի մերժել է մի քանի օր հետո պատվիրված համակարգի բարելավված տարբերակը ունենալու հնարավորությունը և որոշել է միակողմանի լուծել պայմանագիրը:

Պետական եկամուտների կոմիտեն 10.11.2021թ. դրությամբ տեղեկացրել է «Հարմոնիա» հիմնադրամին, որ Ծրագրային ապահովման վերջին թողարկված 1.0.0.-rc5 տարբերակում ևս առկա են սխալներ, որոնք թույլ չեն տալիս Համակարգը տեղադրել արտադրական միջավայրում՝ առանց տրամադրելու որևէ տեղեկատվություն այդ սխալների բովանդակության և քանակի մասին, որին հաջորդել է պայմանագրի միակողմանի լուծումը:

Հայտնում ենք, որ ՏՏ ոլորտում որևէ նոր մշակված ավտոմատացված տեղեկատվական համակարգ ներդրման պահին չի կարող զերծ լինել չնչին և ոչ կրիտիկական սխալներից և/կամ բարելավման առաջարկներից: Այդ նպատակով համակարգերի մշակման և ներդրման գործընթացին հաջորդում է երաշխիքային սպասարկման ժամանակաշրջան, որից հետո՝ համակարգի սպասարկում մասնագիտացված ընկերության կողմից:

«ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի դեպքում ևս նախատեսված է երաշխիքային սպասարկման ժամանակահատված, որի ընթացքում որպես շարունակական գործընթաց պետք է իրականացվի համակարգում հայտնաբերվող սխալների, վրիպակների ուղղում և բարելավումներ:

Փաստում ենք, որ մեր կողմից մշակված Համակարգը, զերծ լինելով արգելափակող, բլոկավորող, կարևոր սխալներից, պատրաստ է տեղադրման արտադրական միջավայրում,

որից հետո սկսվող 6-ամսյա երաշխիքային սպասարկման ժամանակահատվածում կշարունակվի Համակարգի երաշխիքային սպասարկումը և բարելավումը:

Արդյունքում, նման ոչ իրավաչափ և իրականությանը չհամապատասխանող պայմաններում ՀՀ պետական եկամուտների կոմիտեն միակողմանի լուծել է իր և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի միջև 24.02.2021թ. կնքված ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով պայմանագիրը:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և Ընկերության դրսևորած վարքագիծը՝ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2021/321 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի միջև 24.02.2021թ.-ին կնքվել է թիվ «ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր)

անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա և համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 150 օրացույցային օրվա ընթացքում:

iv. Պատվիրատուի և Մասնակցի միջև 16.04.2021թ.-ին կնքվել է թիվ «ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

v. «ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող ե օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների գնման գործընթացն իրականացնելու համար մասնագիտական խումբ ձևավորելու մասին» Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 2021 թվականի հունվարի 18-ի թիվ 8/1-Ա և հունվարի 26-ի թիվ 29/1-Ա և մարտի 15-ի թիվ 103/1 Ա հրամանների համաձայն ձևավորված մասնագիտական խմբի (այսուհետ նաև՝ Մասնագիտական խումբ) կողմից պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ 17.09.2021թ.-ին կազմված թիվ 1 եզրակացության համաձայն՝ *«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի միջև 24.02.2021թ. կնքված «Պետության կարիքների համար ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի» ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով պետական գնման պայմանագրի (Այսուհետ՝*

Պայմանագիր) շրջանակներում «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի (Այսուհետ՝ Կատարող) կողմից, համաձայն 16 ապրիլի 2021թ. կնքված համաձայնագրի (Համաձայնագիր-1 24.02.2021թ. կնքված ՊԵԿ-ԳՀԽԾԾԲ-21/1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին), համաձայն CPV-72261110/501 տեխնիկական բնութագրում ներկայացված ծառայությունների մատուցման ժամկետի՝ ծառայությունների մատուցման ժամանակահատված է սահմանված 150 օրացուցային օր:

17 սեպտեմբերի 2021թ. դրությամբ Կատարողի կողմից խախտվել է ծառայությունների մատուցման ժամանակահատվածը, և չի ապահովվել Պայմանագրի 2.4.1 կետով սահմանված պարտավորությունը:

17 սեպտեմբերի 2021թ. դրությամբ Կատարողի կողմից Պայմանագրով ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ չի ներկայացվել առաջարկություն ծառայությունների մատուցման ժամանակահատվածի երկարաձգման վերաբերյալ՝ Պայմանագրի 7.6 կետի համաձայն:

Ելնելով վերոհիշյալից՝ «ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների գնման գործընթացն իրականացնելու համար մասնագիտական խումբ ձևավորելու մասին» Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 2021 թվականի հունվարի 18-ի թիվ 8/1-Ա և հունվարի 26-ի թիվ 29/1-Ա և մարտի 15-ի թիվ 103/1 Ա հրամանների համաձայն ձևավորված մասնագիտական խումբը պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ տալիս է բացասական եզրակացություն:

Մասնագիտական խմբի անդամներս լիազորում ենք նույն խմբի ղեկավար Ռաֆայել Գրիգորյանին հանդես գալ առաջարկությամբ՝ Կատարողի համար սահմանելու 5 (հինգ) օրացուցային օրախս ժամանակահատված Պայմանագրի դրույթների ապահովման նպատակով:

Մասնագիտական խմբի անդամներս լիազորում ենք նույն խմբի ղեկավար Ռաֆայել Գրիգորյանին՝ Կատարողի կողմից 5 (հինգ) օրացուցային օրվա ժամանակահատվածի

ընթացքում Պայմանագրի դրույթների յապահովման պարագայում հանդես գալ առաջարկությամբ իրականացնելու Պայմանագրի 2-րդ մասի 2.1.3 կետի դրույթները՝ պայմանագիրը լուծելու վերաբերյալ և Պայմանագրի դրույթներից բխող այլ պահանջները:»:

vi. Պատվիրատուի կողմից Մասնակցին 22.09.2021թ.-ին ուղղված թիվ 1/6.1/59470-2021 գրության համաձայն՝ *«ՀՀ ՊԵԿ և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի միջև 24.02.2021թ. կնքված ՊԵԿ-ԳՀԽԵՐԲ-21/1 ծածկագրով «Պետության կարիքների համար ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի (Այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի (Այսուհետ՝ Կատարող) կողմից խախտվել է ծառայությունների մատուցման ժամանակահատվածը և չի ապահովվել Պայմանագրվ սահմանված պարտավո- րությունները:*

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից Կատարողի համար սույն թվականի սեպտեմբերի 23-ից սահմանվում է 5 (հինգ) օրացուցային օրվա ժամանակահատված Պայմանագրի դրույթների ապահովման նպատակով:»:

vii. Մասնագիտական խմբի կողմից պայմանագրի կատարման վերաբերյալ 01.11.2021թ.-ին կազմված թիվ 2 եզրակացության համաձայն՝ *«Սույն թվականի հոկտեմբերի 25-ին Կատարողի կողմից ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչությանը տրամադրվել է Համակարգի 1.0.0-rc3 տարբերակը, որը տեղայնացվել է ՀՀ ՊԵԿ թեստային միջավայրում: ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչության աշխատակիցները հոկտեմբերի 27-30-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել են Համակարգի թեստավորում և վերհանել են մի շարք խնդիրներ: Վերհանված խնդիրները կցվում են սույն եզրակացությանը (առդիր 33 էջ՝ «2021թ. հոկտեմբերի 27-30-ն ընկած ժամանակահատվածում «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի 1.0.0-rc3*

տարբերակի թեսթավորման արդյունքում ձևավորված աշխատանքային փաստաթուղթ»): Վերհանված բոլոր խնդիրների համախումբը վկայում է այն մասին, որ տրամադրված Համակարգի 1.0.0-rc3 տարբերակը չի համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին, մասնավորապես՝ 1.2 կետի 2-րդ պարբերության և 3-րդ պարբերության առաջին ու երկրորդ ենթակետերով սահմանված պահանջներին, այն է.

« ... Համակարգը հնարավորություն կտա տեղափոխվող բոլոր էքսպրես բեռների նկատմամբ իրականացնել ամբողջական հաշվառում, համապատասխան մաքսային ընթացակարգերով հայտարարագրում, մաքսային հսկողության իրականացում, հաշվետվությունների ավտոմատացում և վերլուծությունների կատարում:

Համակարգի միջոցով է պետք է իրականացվի հետևյալ հիմնական գործառույթները.

- *Փոխադրողի կողմից որպես էքսպրես-բեռ տեղափոխվողֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների հայտարարագրում՝ ԵՏՄ օրենսդրությամբ սահմանված՝ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ,*
- *Փոխադրողի կողմից որպես էքսպրես-բեռ տեղափոխվող՝ ԵՏՄ օրենսդրությամբ սահմանված մաքսային ընթացակարգերով հայտարարագրման ենթակա ապրանքների հայտարարագրում ԵՏՄ օրենսդրությամբ սահմանված՝ էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կիրառությամբ...»*

Տրամադրված Համակարգի 1.0.0-rc3 տարբերակը չի համապատասխանում նաև տեխնիկական բնութագրի հետևյալ պահանջին.

Կապալառու ընկերության տրամադրած ծրագրային ապահովումները և մատուցված ծառայությունները պետք է զերծ լինեն նախագծման, ծրագրային և այլ թերություններից, որոնք կարող են հանգեցնել համակարգի և/կամ վերջինիս բաղկացուցիչ մասերի ոչ պատշաճ աշխատանքին, նախանշված պահանջների չկատարմանը, կատարողականության, հուսալիության, ընդլայնման, արտադրողականության խափանմանը:»

Միևնույն ժամանակ mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի թիվ 55055-2021 առ 25 հոկտեմբերի 2021թ. «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի գրությամբ ներկայացված տեխնիկական առաջադրանքում նկարագրված է միայն էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրին վերաբերող տեղեկատվությունը, և բացակայում է էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրին վերաբերող տեղեկատվությունը,

իսկ «Օգտվողի ձեռնարկում» ամբողջական չեն ներկայացված գործողությունների նկարագրությունները:

Հաշվի առնելով վերոհիշյալ խնդիրները և տեխնիկական բնութագրով սահմանված պահանջների չկատարման հանգամանքը՝ եզրակացնում ենք, որ Կատարողի կողմից հանձնված և Պատվիրատուի սերվերային թեստային միջավայրում տեղադրված տարբերակը չի կարող տեղայնացվել Պատվիրատուի սերվերային արտադրական իրական (live) միջավայրում, և էքսպրես-բեռների հայտարարագրման համար հնարավոր չէ ամբողջությամբ կիրառել ո՛չ էքսպրես-բեռների ապրանքային հայտարարագիր, ո՝չ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագիր:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տալիս ենք բացասական եզրակացություն:»:

viii. Մասնակցի կողմից Պատվիրատուին 02.11.2021թ.-ին ուղղված գրության համաձայն՝ *«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի կողմից N ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով (ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման) պայմանագրի արդյունքները ս.թ. հոկտեմբերի 25-ին Պատվիրատուին ներկայացնելուց հետո, Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից նկատվել և ս.թ. հոկտեմբերի 27-ին մեզ է ներկայացվել ուղղման ընդամենը մեկ աննշան սխալ (bug), որը ուղղվել է մեր կողմից ս. թ. հոկտեմբերի 29-ին և ծրագրային ապահովման նոր տարբերակը ներկայացվել է Պատվիրատուին: Մեր կողմից ևս կատարվել են ծրագրային ապահովման որոշակի բարելավումներ, որոնք հասանելի են դարձվել Պատվիրատուին ս. թ. նոյեմբերի 01-ին:*

Մինչ այժմ մեր կողմից թարմացված ծրագրային ապահովման տարբերակները պատասխանատու ստորաբաժանման կողմից չեն տեղադրվել Պատվիրատուի թեստային միջավայրում և չեն դիտարկվել, նաև մեզ չի տրամադրվել որևէ տեղեկություն առկա որևէ այլ թերությունների և/կամ ուղղման ենթակա սխալների մասին: Խնդրում եմ վերջնական թեստավորման համար դիտարկել մեր կողմից ներկայացված վերջին տարբերակը:

Անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ ծրագրային ապահովման համակարգը ապահովում է պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված բոլոր գործառույթների իրականացումը, իսկ ընթացքում ի հայտ եկող ոչ կրիտիկական վրիպակները/սխալները և/կամ բարելավման կարիքները բնականոն են զրոյից մշակված բարդ համակարգերի համար և ենթակա են ուղղման երաշխիքային սպասարկման ժամանակահատվածում:»:

ix. Մասնակցի կողմից Պատվիրատուին 05.11.2021թ.-ին ուղղված գրության համաձայն՝ *«Ի պատասխան N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի արդյունքների վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից Armeps համակարգում զետեղված բացասական եզրակացության, ցանկանում ենք նշել հետևյալը.*

1. Պատասխանատու ստորաբաժանման կողմից համակարգի թեստավորման ընթացքում (հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 01-ը) «Հարմոնիա» հիմնադրամին ուղղման է ներկայացվել ընդամենը մեկ չնչին սխալ, որը ուղղվել է մեր կողմից և նոր տարբերակը ներկայացվել է ՊԵԿ: Նույն ժամանակահատվածում մեր կողմից կատարվել են համակարգի բարելավումներ և չնչին սխալների ուղղումներ, որոնք նոր թողարկման տեսքով հասանելի են դարձվել ՊԵԿ-ի պատասխանաաւ ստորաբաժանմանը գրավոր առաջարկությամբ թեստավորման նպատակով դիտարկել ծրագրի 01.11.2021թ. թողարկված տարբերակը: Այնուամենայնիվ, ՊԵԿ-ի պատասխանատու ստորաբաժանումը դիտարկել է առաջին թողարկված տարբերակը և բացասական եզրակացությանը կից փաստաթղթում նշել է մի շարք թերություններ, որոնք արդեն իսկ ուղղված և ներկայացված են եղել ՊԵԿ հաջորդ թողարկմամբ:

2. Մեր կողմից իրականացվել է բացասական եզրակացությանը կից փաստաթղթում արձանագրված թերությունների/սխալների վերլուծություն, որի արդյունքում հայտնում ենք հետևյալը.

Աշխատանքային խմբի եզրակացությանը կից փաստաթղթում արձանագրված 44 թերություններից.

23-ը ուղղված են եղել ՊԵԿ-ին ներկայացված 01.11.2021թ. տարբերակում

5-ը կարելի է դիտարկել որպես բարելավման առաջարկ, այլ ոչ թե սխալ

3-ը ոչ թե այս համակարգի խնդիր է, այլ Մաքսային միասնական համակարգի (ՄՄԱՏՀ) բարելավման կարիք

3-ը տեխնիկական առաջադրանքից դուրս նոր առաջադրանք

1-ը խնդիր չէ, այլ ՄՄԱՏՀ համակարգի աշխատանքի առանձնահատկություն

1-ը խնդրի բովանդակությունը հասկալալի չէ, այն ենթակա է քննարկման

6-ը լուծման ենթակա չնչին սխալ

2-ը կրկնվող արդեն նշված 6 ուղղման ենթակա սխալներում ներառված:

Յուրաքանչյուր արձանագրված խնդրի վերաբերյալ մեր արձագանքը ներկայացնում ենք կից փաստաթղթով:

Այսպիսով, այս պահին առկա է ընդամենը 6 ուղղման ենթակա չնչին սխալ, որոնք բարելավման առաջարկությունների հետ մեկտեղ կշտկվեն համակարգի նոր թողարկմամբ առաջիկա 4 աշխատանքային օրերի ընթացքում և կտրամադրվեն ՊԵԿ-ին:

Ցանկանում ենք շեշտել, որ համակարգը ապահովում է պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված գործառույթների և գործընթացների ամբողջ կենսացիկլը և պատրաստ է ներդրման արտադրական միջավայրում մի քանի օրերի ընթացքում: Համաձայն պայմանագրի դրանից հետո հայտնաբերվող թերությունները և/կամ բարելավումները ենթակա են շտկման երաշխիքային սպասարկման ժամանակահատվածում:

Բնականոն է բարդ ավտոմատացված համակարգերի ներդրման և շահագործման ընթացքում թերությունների, բարելավումների առաջ գալը և դրանց շտկումը համաձայնեցված կարգով: Օրինակ մեր կողմից սպասարկվող ՄՄԱՏՀ համակարգում ամսական կտրվածքով բացվում է միջինը 15 շտկման/բարելավման հայտ, որոնք իրագործվում են սպասարկման ընթացքում և չեն խոչընդոտում համակարգի անխափան աշխատանքին:

Հաշվի առնելով, որ արձանագրված ուղղման ենթակա սխալների համար անհրաժեշտ է ընդամենը մի քանի օր, խնդրում ենք մեզ տրամադրել այդ կարճ ժամանակահատվածը թերությունները շտկելու համար, որից հետո համակարգը կարող է տեղափոխվել արտադրական միջավայր և անցնել երաշխիքային սպասարկման ռեժիմ:

x. Պատվիրատուի կողմից Մասնակցին 10.11.2021թ.-ին ուղղված թիվ 1/6.1/71612-2021 գրության համաձայն՝ *«Ի պատասխան Ձեր 02 նոյեմբերի 2021թ. և 05 նոյեմբերի 2021թ. (mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի թիվ Հսկիչ համար՝ SR25-9C76-7AB8-8325 առ 02.11.2021թ. և Հսկիչ համար՝ SR65-FF71-5E7E-863E առ 08.11.2021թ.) գրությունների (այսուհետ՝ Գրություն)՝ տեղեկացնում եմ, որ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի 06.10.2021թ. (Գ/22133-2021 առ 07.10.2021թ.) գրությամբ ՀՀ ՊԵԿ (այսուհետ՝ Պատվիրատու) և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի միջև 24.02.2021թ. կնքված ՊԵԿ-ԳՀԽԾՋԲ-21/1 ծածկագրով «Պետության կարիքների համար*

ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Կատարող) կողմից խնդրարկվել էր հավելյալ ժամանակահատված մինչ սույն թվականի հոկտեմբերի 25-ը ներառյալ ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի արդյունքների «ամբողջական ամփոփման և ՀՀ ՊԵԿ-ին ներկայացնելու համար»:

Սույն թվականի հոկտեմբերի 25-ին Կատարողի կողմից ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչությանը տրամադրվել է ծրագրային ապահովման 1.0.0-rc3 տարբերակը, որի ուսումնասիրության արդյունքում վերհանվել են մի շարք խնդիրներ, որի արդյունքում «ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների գնման գործընթացն իրականացնելու համար մասնագիտական խումբ ձևավորելու մասին» Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 2021 թվականի հունվարի 18-ի թիվ 8/1-Ա և հունվարի 26-ի թիվ 29/1-Ա. և մարտի 15-ի թիվ103/1-Ա հրամանների համաձայն ձևավորված մասնագիտական խումբը պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ տվել է բացասական եզրակացություն (կցվում է), և Պայմանագրի 3.3 կետի համաձայն armeps համակարգի միջոցով ընդունման-հանձման արձանագրությունը չի ստորագրվել:

Միևնույն ժամանակ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի Տեխնիկական բնութագրի Պահանջ 4-ի համաձայն «Ծրագրային ապահովումները պետք է նախքան տեղադրումը փորձարկվի Կապալառուի թեսթային միջավայրում կապալառուի կողմից, որից հետո տեղայնացվի Պատվիրատուի թեսթային միջավայրում», որը ենթադրում է, որ ՀՀ ՊԵԿ ՏՏ

վարչությանը տրամադրված ծրագրային ապահովման 1.0.0-rc3 տարբերակը պետք է զերծ լիներ թերություններից, անճշտություններից, կրիտիկական և արգելափակոց խնդիրներից, ծրագրային և այլ թերություններից, և Կատարողը պետք է բավարարեր Պահանջ 48-ի դրույթները:

Տեղեկացնում եմ նաև, որ սույն թվականի 12-25-ն ընկած ժամանակահատվածի ընթացքում Պատվիրատուի կողմից Կատարողի թեստային միջավայրում իրականացվել է Համակարգի ուսումնասիրություն, որակի ստուգում և թեստավորման արդյունքում ի հայտ եկած թերությունները, անճշտությունները, արգելափակոց և այլ խնդիրները Կատարողին ներկայացվել են իրական ժամանակում աշխատանքային կարգով, սակայն ծրագրային ապահովման 1.0.0-rc3 տարբերակում դրանց մի մասը դեռ կարգավորված չէին:

Տեղեկացնում եմ նաև, որ Պատվիրատուի և Կատարողի միջև ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ աշխատող Համակարգը Պատվիրատուին պետք է տրամադրվեր մինչև 2021 թվականի հոկտեմբերի 25-ը ներառյալ (ինչն արդեն իսկ բավականին ուշ է պայմանագրով ի սկզբանե սահմանված ժամկետից, որը սեպտեմբերի 13-ն էր), և Պատվիրատուի կողմից Համակարգի ընդունման վերաբերյալ որոշման կայացման նպատակով դիտարկվել է հենց հոկտեմբերի 25-ին ներկայացված 1.0.0-rc3 տարբերակը: Համակարգի բազմաթիվ տարբերակներ կարող էին դիտարկվել, և համատեղ աշխատանք կարող էր տարվել մինչև սահմանված ժամկետը և ոչ դրանից հետո, այլապես այդ գործընթացը կարող է լինել անվերջ, և ժամկետների սահմանումն այդ պարագայում դառնում է անիմաստ:

Այնուամենայնիվ, տեղեկացնում եմ Ձեզ, որ Դ/24514-2021 առ 02.11.2021թ. և Դ/24861-2021 առ 08.11.2021թ. գրություններով Կատարողի կողմից ներկայացված սույն թվականի նոյեմբերի 01-ի՝ ծրագրային ապահովման տարբերակի (Տարբերակ 1.0.0-rc5) ռաումնասիրության արդյունքում վերհանվել են մի շարք խնդիրներ, որոնց համախումբը վկայում է այն մասին, որ Պատվիրատուի սերվերային թեստային միջավայրում տեղադրված տարբերակը (Տարբերակ՝ 1.0.0-rc5) ևս չի կարող տեղայնացվել Պատվիրատուի սերվերային արտադրական իրական (live) միջավայրում, և էքսպրես-բեռների հայտարարագրման համար հնարավոր չէ ամբողջությամբ կիրառել ոչ էքսպրես-բեռների ապրանքային հայտարարագիր, ո՛չ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագիր:

Միևնույն ժամանակ տեղեկացնում եմ, որ սույն թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 55055-2021 գրությամբ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի կողմից տեղեկացվել է, որ Կատարողը Պատվիրատուին է

տրամադրել «նաև Կատարողի և Պատվիրատուի միջև հոկտեմբերի 07-ից մինչև հոկտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած բոլոր հանդիպումների արձանագրությունները»:

Տեղեկացնում եմ, որ բացառությամբ 07 հոկտեմբերի 2021թ. տեղի ունեցած հանդիպման արձանագրության՝ այլ տեղի ունեցած հանդիպումների արձանագրության տեքստերը չեն համաձայնեցվել Պատվիրատուի հետ:»:

xi. Մասնակցի կողմից Պատվիրատուին 10.11.2021թ.-ին ուղղված գրության համաձայն՝ *«Ի պատասխան Ձեր 10.11.2021թ. N 71612-2021 գրության, հայտնում ենք. որ «Հարմոնիա»» հիմնադրամի կողմից Պետական եկամուտների կոմիտեին ներկայացված ծրագրային ապահովման համակարգը զերծ է բլոկավորող, արգելափակող և կարևոր սխալներից, որոնք կարող են հանգեցնել համակարգի աշխատանքի խափանմանը, անվտանգային խնդիրներին կամ բիզնես տրամաբանության սխալ աշխատանքին, մինչդեռ չնչին և ոչ կրիտիկական սխալները ենթակա են շուտափույթ ուղղման Պատվիրատուից դրանց մասին ծանուցում ստանալու պահից համաձայնեցված ողջամիտ ժամկետներում, ինչպես որ դա արվում է նմանատիպ ՏՏ համակարգերի ներդրման և սպասարկման պայմանագրերի շրջանակներում, որոնց փորձն ունի ՊԵԿ-ի պատասխանատու ստորաբաժանումը:*

Բազմաթիվ ավտոմատացված համակարգերի մշակման, ներդրման և սպասարկման ոլորտում մասնագիտացված Ձեր աշխատանքային խումբը կհաստատի, որ որևէ մշակված ավտոմատացված տեղեկատվական համակարգ ներդրման պահին չի կարող զերծ լինել չնչին և ոչ կրիտիկական սխալներից և/կամ բարելավման առաջարկներից: Այդ նպատակով համակարգերի մշակման և ներդրման գործընթացին հաջորդում է երաշխիքային սպասարկման ժամանակաշրջան, որից հետո համակարգի սպասարկում մասնագիտացված ընկերության կողմից հաշվի առնելով առկա փորձը:

Որպես օրինակ կարող ենք բերել մեր կողմից սպաասարկվող Մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգը (ՄՄԱՏՀ): ՄՄԱՀ-ն ընդունվել է և տեղադրվել է արտադրական միջավայրում 2018թ. սակայն ՄՄԱՏՀ-ում մինչ այժմ հայտնաբերվում են սխալներ և թերություններ, որոնց մասով ամսվա կտրվածքով բացվում/լուծվում է միջինը 15 թերթիկ, սակայն դրանց ուղղման գործընթացում (ՄՄԱՏՀ-ն շարունակվում է շահագործվել արտադրական միջավայրում և ապասարկել պետության կարիքները:

Ապահովելով ավտոմատացված գործընթացների ճշգրիտ կենսացիկլը և չունենալով բլոկավորող, արգելափակող սխալներ համոզված ենք, որ մեր կողմից մշակված համակարգը կարող է տեղափոխվել արտադրական (live) միջավայր:

Խնդրում ենք տրամադրել ՊԵԿ-ի պատասխանատու ստորաբաժանման կողմից ծրագրի 1.0.0. rc5 տարբերակում հայտնաբերված յուրաքանչյուր սխալի վերաբերյալ տեղեկատվություն, քանի որ մեզ դրանց մասին ոչինչ հայտնի չէ: Շատ հաճախ որպես «սխալ» որակվող խնդիրները ընդամենը ոչ ճշգրիտ արված կարգավորման կամ կարգաբերման արդյունք են և ենթակա են լուծման հայտնաբերման նույն պահին, կամ խոսքը գնում է ոչ թե սխալի, այլ ՄՄԱՏՀ ընդհանուր աշխատանքի առանձնահատկության, կամ բարելավման առաջարկի մասին: ՊԵԿ-ի բացասական եզրակացությանը կցված փաստաթղթում արձանագրված սխալներից դեռևս 01.11.2021թ. դրությամբ ուղղման ենթակա է եղել ընդամենը 6 չնչին սխալ, որոնց գերակշռող մասն արդեն իսկ ուղղված է ծրագրի 1.0.0-rc6 տարբերակում, մինչդեռ մեզ հայտնի մյուս բոլոր չնչին սխալները և բարելավման առաջարկները կատարված կլինեն երկու օրերի ընթացքում:

Վստահ ենք, որ ծախսարդյանավետության տեսակետից նպատակահարմար է հայտնաբերվող սխալների և կամ առաջարկությունների մասին հայտնել Կատարողին, որը 24 7 աշխատանքային ռեժիմում պատրաստ է շտկել թերությունները և բարելավել համակարգը, մինչդեռ Պատվիրատուն կունենա պետության կարիքները սպասարկող համակարգ արդեն այժմ, որի բարելավումը որպես շարունակական գործընթաց կիրականացվի երաշխիքային սպասարկման ժամանակահատվածում:

Հակառակ դեպքում պայմանագիրը միակողմանի լուծելու դեպքում, ՊԵԿ-ը չի ունենա պետության կարիքների համար մեծ կարևորություն ունեցող «էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայաարարագրվող ապրանքների հայտարարագրման» համակարգ, կամ կունենա բազմաթիվ ամիսներ հետո:

Կից ներկայացնում ենք մեր 05.11.2021թ. գրության պատճեն ուղղված «ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի շրջանակներում ստեղծված աշխատանքային խմբին բացասական եզրակացությանը կից փաստաթղթում արձանագրված յուրաքանչյուր սխալի վերաբերյալ մեր մեկնաբանություններով, որով հաստատվում է, որ համակարգում 01.11.2011թ. դրությամբ չկա որևէ բլոկավորող, արգելափակող կամ կարևոր սխալ և ուղղման ենթակա է ընդամենը 6 չնչին սխալ:

Խնդրում ենք կազմակերպել մասնագիտացված խմբերի հանդիպում ՊԵԿ ղեկավարության մասնակցությամբ, պատասխանատու ստորաբաժանման կողմից վկայակոչվող, սակայն մեզ անհայտ սխալների գոյության, ուսումնասիրության և պարզաբանման համար:»:

xii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 10.11.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 10.11.2021թ.-ի թիվ 1/18-2/71709-2021 ծանուցման համաձայն՝ 2021 թվականի փետրվարի 24-ին (համաձայնագրի կնքման ամսաթիվը՝ 16.04.2021թ.) ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Կատարող) միջև կնքվել է ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), սակայն Կատարողի կողմից խախտվել է ծառայությունների մատուցման ժամանակահատվածը և մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով չհամապատասխանող ծառայություն, չի ապահովվել Պայմանագրի 2.4.1 կետով սահմանված պարտավորությունը և կատարման ընթացքի վերաբերյալ մասնագիտական խմբի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերը Պատվիրատուն ստիպված է պայմանագրով նախատեսված պայմանները չկատարելու համար միակողմանի լուծել 2021 թվականի փետրվարի 24-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով գնման պայմանագիրը և պայմանագրի մասով գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված 9 000 000 ՀՀ դրամի որակավորման և 6 000 000 ՀՀ դրամի պայմանագրի ապահովման գումարները: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն նաև նախաձեռնում է «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.11.2021թ.-ի թիվ 26/26-1/18828-2021 գրությամբ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը

(այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել

մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի միջև 24.02.2021թ.-ին կնքված թիվ «ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա և համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 150 օրացույցային օրվա ընթացքում:

Պատվիրատուի և Մասնակցի միջև 16.04.2021թ.-ին կնքվել է թիվ «ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը:

www.gnumner.am համացանցային 10.11.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 10.11.2021թ.-ի թիվ 1/18-2/71709-2021 ծանուցման համաձայն՝ 2021 թվականի փետրվարի 24-ին (համաձայնագրի կնքման ամսաթիվը՝ 16.04.2021թ.) ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի միջև կնքվել է ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր, սակայն

Կատարողի կողմից խախտվել է ծառայությունների մատուցման ժամանակահատվածը և մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով չհամապատասխանող ծառայություն, չի ապահովվել Պայմանագրի 2.4.1 կետով սահմանված պարտավորությունը և կատարման ընթացքի վերաբերյալ մասնագիտական խմբի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերը Պատվիրատուն ստիպված է պայմանագրով նախատեսված պայմանները չկատարելու համար միակողմանի լուծել 2021 թվականի փետրվարի 24-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/1 ծածկագրով գնման պայմանագիրը և պայմանագրի մասով գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված 9 000 000 ՀՀ դրամի որակավորման և 6 000 000 ՀՀ դրամի պայմանագրի ապահովման գումարները: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն նաև նախաձեռնում է «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ամբողջացնելով վերոգրյալ իրավական ու փաստական հանգամանքները, ուսումնասիրելով կողմերի գրագրությունները, ինչպես նաև Մասնագիտական խմբի կողմից կազմված երկու եզրակացությունները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակիցը դրսևորել է անգործություն, այն է՝ բավարար չափով գործողություն չի կատարել ստանձնած պարտավորությունների ամբողջական ու պատշաճ կատարման համար: Վերջինս, կնքելով Համաձայնագիրը, պարտավորվել է մինչև 13.09.2021թ.-ը մատուցել ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող և օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայություններ, որը, սակայն, այդ ժամանակահատվածում չի իրականացվել: Ընդ որում, ծառայությունները ամբողջական և պատշաճ չեն կատարվել Պատվիրատու կողմից օրենսդրությամբ և պայմանագրով չսահմանված ձևով տրամադրված ժամկետում, այն է՝ 25.10.2021թ.-ը ներառյալ: Հիշյալ հանգամանքների մասին է վկայում Մասնակցի կողմից Պատվիրատուին Համակարգի 1.0.0-rc3 տարբերակից բացի 25.10.2021թ.-ից հետո rc4, rc5 և ապա rc6 տարբերակների տրամադրումը:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից մատնանշված թերությունների «չնչին» լինելու՝ Մասնակցի կողմից վկայակոչված հանգամանքներին, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ այդ խախտումների «մեծությունը» կամ «փոքրությունը» ենթակա է գնահատման այդ ոլորտում հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող մասնագետի կողմից, որպիսի հանգամանքը Բողոքներ քննող անձը հաստատված է համարում և հիմք ընդունում «ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգում նոր «Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համաձայն, որպես էքսպրես-բեռ փոխադրողի կողմից տեղափոխվող ե օրենսդրությամբ սահմանված էքսպրես-բեռների համար ապրանքային հայտարարագրի կամ էքսպրես-բեռների համար ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառությամբ հայտարարագրվող ապրանքների հայտարարագրման» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների գնման գործընթացն իրականացնելու համար մասնագիտական խումբ ձևավորելու մասին» Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 2021 թվականի հունվարի 18-ի թիվ 8/1-Ա և հունվարի 26-ի թիվ 29/1-Ա և մարտի 15-ի թիվ 103/1 Ա հրամանների համաձայն ձևավորված մասնագիտական խմբի կողմից պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ 01.11.2021թ.-ին կազմված թիվ 2 եզրակացությամբ վերհանված անհամապատասխանությունները:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Մասնակցի կողմից թույլ է տրվել Պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերի խախտում, որի հիման վրա Պատվիրատուն 10.11.2021թ.-ին միակողմանիորեն լուծել է պայմանագիրը՝ նույն օրը www.gnumner.am համացանցային հրապարակելով Պայմանագրի միակողմանի լուծման մասին 10.11.2021թ.-ի թիվ 1/18-2/71709-2021 ծանուցումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.11.2021թ.-ի թիվ 26/26-1/18828-2021 գրությամբ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/321 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**